ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայտարարվում է մրցույթ՝ «Երևանի հ.153 մսուր-մանկապարտեզ ՀՈԱԿ-ի **հոգեբանի (1,0 դրույք) և լոգոպեդի (1,0 դրույք)** թափուր հաստիքների համար:
Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է ըստ ՀՀ ԿԳՄՄՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը, և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:
Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել
-դիմում (Ձև 1)
-կրթության մասին փաստաթուղթ (դիպլոմ)
-անձը հաստատող փաստաթուղթ
-աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք կամ աշխատանքային գրքույկ (առկայության դեպքում)
-ինքնակենսագրություն (Ձև 4)
-մեկ լուսանկար 3×4 չափի
-այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ
-ՀՀ արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինվորական գրքույկ կամ զինվորական կցագրման վկայական
-հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (դրանց առկայության դեպքում):
Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և վերադարձնում բնօրինակները: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել թերությունները և համալրել փաստաթղթերի ցանկը:
Փաստաթղթերն ընդունվում են 2024թ.ապրիլի 30-ից մինչև մայիսի31-ը, ամեն օր՝ ժամը 10:00-17:00, բացի շաբաթ, կիրակի և ոչ աշխատանքային օրերից:

Մրցույթը տեղի կունենա 2024թ. հունիսի 5-ին՝ ժամը 11:00-ին, «Երևանի հ.153 մսուր-մանկապարտեզ ՀՈԱԿ-ում, հասցեն՝ ք.Երևան, Լեփսիուսի 6: Տեղեկությունների համար զանգահարել (010) 24-39-90 հեռախոսահամարով:

Կատարող՝ Ն. Նորսոյան, հեռ.՝ /011-51-88-76/: